Հավելված

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024 թվականի --------- -ի № -Ն որոշման

ԿԱՐԳ

ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է փոստային կապի ազգային օպերատորի (նշանակված օպերատորի) կողմից (այսուհետ՝ Օպերատոր) մատուցվող Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագների սահմանման ու վերանայման գործընթացը:

2. Սույն կարգում օգտագործված հասկացություններն են՝

1) Հայտ՝	Սակագնի սահմանման կամ վերանայման համար Հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերի փաթեթ.
2) Հայտատու՝	Սակագնի սահմանման կամ վերանայման համար Հանձնաժողով Հայտ ներկայացնող Օպերատոր.
3) Հանձնաժողով՝	Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
4) Սակագին՝	Փոստային կապի ունիվերալ ծառայությունների մատուցման համար Հանձնաժողովի կողմից սահմանված չափ.
5) Փոստային կապի ունիվերսալ ծառայություններ՝	«Փոստային կապի մասին» օրենքով սահմանված որակի չափանիշներին համապատասխան՝ բոլոր օգտվողների համար, անկախ Հայաստանի Հանրապետությունում նրանց գտնվելու վայրից, հասանելի, մշտական հիմունքներով փոստային կապի ծառայությունների նվազագույն շրջանակի մատուցում:

3. Սահմանված Սակագինը կարող է վերանայվել ինչպես Օպերատորի, այնպես էլ Հանձնաժողովի նախաձեռնությամբ:
4. Սակագների գործողության ժամկետը վեց ամսից պակաս չի կարող լինել, բացառությամբ «Փոստային կապի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:
5. Հայտատուն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:
6. Հայտատուի կողմից Հանձնաժողով ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է վավերացված լինեն Օպերատորի կնիքով (առկայության դեպքում) և լիազորված անձի ստորագրությամբ:

2. ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ

7. Սակագների սահմանման ու վերանայման համար Հայտատուն համապատասխան հաշվարկներով և հիմնավորումներով Հայտ է ներկայացնում Հանձնաժողով՝ մեկ օրինակից, համաձայն սույն կարգի №1 հավելվածով սահմանված ցանկի:
8. Հայտատուն Սակագների սահմանման ու վերանայման իր մտադրության վերաբերյալ հայտարարությունը սույն կարգի №3 հավելվածով սահմանված ձևով հրապարակում է Հայաստանի Հանրապետությունում տպագրվող երկու օրաթերթում կամ օրաթերթերի ինտերնետային կայքերում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքէջում (http://www.azdarar.am/)::
9. Հայտատուն սույն կարգի №3 հավելվածով սահմանված ձևով հայտարարությունը հրապարակում է Հայտը Հանձնաժողով մուտքագրելու օրվանից ոչ շուտ, քան 20 աշխատանքային օր առաջ:
10. Հայտը Հանձնաժողովում մուտքագրվելուց հետո Հանձնաժողովի աշխատակազմը սույն կարգի 11-րդ կետում նշված ժամկետում ստուգում է Հայտի ամբողջականությունը, նրանում ընդգրկված փաստաթղթերի ձևակերպման ճշտությունը:

11. Հանձնաժողովը Հայտի ստուգման արդյունքների մասին գրավոր տեղեկացնում է Հայտատուին՝ Հայտը Հանձնաժողովում մուտքագրվելու օրվանից ոչ ուշ, քան տաս աշխատանքային օրվա ընթացքում:

12. Հայտը չի ընդունվում ուսումնասիրության, եթե՝

1) Հայտում ընդգրկված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգով սահմանված պահանջներին,

2) ներկայացված փաստաթղթերում և տեղեկատվություններում առկա են անճշտություններ և անհամապատասխանություններ:

13. Հայտն ուսումնասիրության չընդունելու դեպքում՝

1) այն Հայտատուին չի վերադարձվում և պահպանվում է Հանձնաժողովում,

2) Հայտատուն, հայտնաբերված թերությունները վերացնելուց հետո, կարող է նոր Հայտով դիմել Հանձնաժողով, որի դեպքում Հայտատուն իրավունք ունի գրավոր հղում կատարել նախկին Հայտով ներկայացված փաստաթղթերին, եթե դրանցում ներկայացված տվյալները նոր Հայտի ներկայացման պահին չեն փոփոխվել:

14. Հայտն ուսումնասիրության ընդունելու մասին Հայտատուին տեղեկացնելու օրվանից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայտը տեղադրվում է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հրապարակելով նաև համապատասխան ստորաբաժանման հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն:

15. Սույն կարգի 12-րդ կետում նշված հիմքեր չհայտնաբերելու դեպքում Հայտն ընդունվում է ուսումնասիրության, որի արդյունքներով Հանձնաժողովը որոշմամբ Հայտը մերժում է կամ Սակագինը սահմանում, վերանայում (վերահաստատում կամ փոփոխում) Հայտն ուսումնասիրության ընդունելու օրվանից հետո՝ 80 աշխատանքային օրվա ընթացքում:

16. Սակագների սահմանման կամ վերանայման մասին որոշման նախագիծը Հանձնաժողովի նիստում քննարկելու օրվանից՝

1) առնվազն վեց աշխատանքային օր առաջ Սակագների վերաբերյալ Հանձնաժողովի աշխատակազմի հաշվարկները՝ Հայտով ներկայացված հաշվարկների հետ համեմատականով, տեղադրվում են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում,

2) առնվազն մեկ աշխատանքային օր առաջ սպառողների շահերը պաշտպանող կազմակերպությունների և Հայտատուի ներկայացուցիչների մասնակցությամբ

Հանձնաժողովում կազմակերպվում է քննարկում, որի տեղի և ժամի մասին Հանձնաժողովն իր պաշտոնական կայքէջում տեղադրում է համապատասխան հայտարարություն քննարկումից առնվազն երեք աշխատանքային օր առաջ:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

17. Հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ սույն կարգի համաձայն կարող է վերանայել գործող Սակագինը և սահմանել նոր Սակագին՝ ելնելով Օպերատորի տնտեսական գործունեության արդյունքներից, ինչպես նաև «Փոստային կապի մասին» օրենքով նախատեսված դեպքերում:
18. Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ Սակագների վերանայման գործընթաց ձեռնարկելու դեպքում՝
    1) այդ մասին գրավոր տեղեկացնում է Օպերատորին,
    2) Օպերատորից կարող է պահանջել Սակագնի տարր կազմող ցուցանիշների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն,
    3) սույն կարգի 16-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ընթացակարգին համապատասխան իրականացնում է քննարկում:
19. Հանձնաժողովը սույն կարգի 18-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված գրավոր տեղեկացումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում իր պաշտոնական կայքէջում հրապարակում է հաղորդագրություն Սակագների վերանայման գործընթաց սկսելու վերաբերյալ՝ նշելով նաև Սակագների վերանայման գործընթաց սկսելու հանգամանքները:
20. Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ Սակագինը վերանայում է Օպերատորին այդ մասին գրավոր տեղեկացնելու օրվանից հետո 80 աշխատանքային օրվա ընթացքում:

Հավելված №1
Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների
մատուցման սակագների սահմանման
ու վերանայման կարգի

ՑԱՆԿ

ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀԱՅՏՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Սակագների սահմանման կամ վերանայման դիմում՝ համաձայն սույն կարգի №2 հավելվածի,
2. Հայաստանի Հանրապետությունում տպագրվող երկու օրաթերթում կամ օրաթերթերի ինտերնետային կայքերում Սակագների սահմանման կամ վերանայման վերաբերյալ Հայտատուի մտադրության մասին հայտարարություն՝ համաձայն սույն կարգի №3 հավելվածի,
3. Տեղեկատվություն անհրաժեշտ հասույթի վերաբերյալ՝ համաձայն սույն կարգի №4 հավելվածի Ձև №1-ի,
4. Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման Սակագների հաշվարկ՝ համաձայն սույն կարգի №4 հավելվածի Ձև №2-ի,
5. Տեղեկատվություն փոստային կապի ունիվերսալ և ոչ ունիվերսալ ծառայությունների ծավալային ցուցանիշների վերաբերյալ՝ համաձայն սույն կարգի №4 հավելվածի Ձև №3-ի,
6. Տեղեկատվություն հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության (ամորտիզացիայի) վերաբերյալ՝ համաձայն սույն կարգի №4 հավելվածի Ձև №4-ի,
7. Տեղեկատվություն աշխատակիցների թվաքանակի և միջին ամսական աշխատավարձի վերաբերյալ (ըստ ծախսային կենտրոնների)՝ համաձայն սույն կարգի №4 հավելվածի Ձև №5-ի, ինչպես նաև Օպերատորի հաստիքացուցակը՝ հաստատված տնօրենների խորհրդի կողմից,
8. Աշխատողների՝ ըստ գործառույթների բաշխման վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն սույն կարգի №4 հավելվածի Ձև №6-ի,

9. №4 հավելվածով սահմանված №1-6-րդ Ձևերով նախատեսված ցուցանիշները Հայտատուի կողմից կարող են համալրվել նոր տողերով կամ եղած տողերը տրոհվել բաղկացուցիչ մասերի:

Հավելված №2
Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների
մատուցման սակագների սահմանման ու
վերանայման կարգի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ**

ԴԻՄՈՒՄ

1. Խնդրում եմ

_____

(սահմանել, վերանայել)

_____

(Հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

_____ Սակագինը:

(Փոստային կապի ունիվերսալ ծառայության (ծառայությունների) անվանումը)

Առաջարկվող Սակագինը՝ ըստ ծառայությունների տեսակների _____ _____:

(նշվում է մեծությունը և չափման միավորը) (նշվում է ավելացված արժեքի հարկը ներառված լինելը կամ չլինելը)

2. Դիմումին կցվում են՝
   1) _____
   2) _____
   3) _____
   _____
3. Օպերատորի գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն) _____
4. Հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն _____
5. Պետական գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը _____
6. Սակագնի սահմանման (վերանայման) հայտով ներկայացված տեղեկությունների և փաստաթղթերի իսկությունը հաստատում եմ:
7. Սույնով տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ Սակագնի սահմանման (վերանայման) գործընթացին առնչվող իրազեկումն իրականացվի սույն դիմումով ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեով:

_____

(Ընկերության ղեկավարի անուն, ազգանուն, ստորագրություն)

Կ. Տ.(առկայության դեպքում)

_____:

(օրը, ամիսը, տարին)

Հավելված №3
Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների
մատուցման սակագների սահմանման ու
վերանայման կարգի

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

_____
(Հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

մտադիր է դիմել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման (վերանայման) հայտով՝ հետևյալ ծառայությունների համար:

_____
(Փոստային կապի ունիվերսալ ծառայության (ծառայությունների) անվանումը)

գործող սակագինը՝ _____ (ներառյալ՝ ԱԱՀ-ն)

առաջարկվող սակագինը՝ _____ (ներառյալ՝ ԱԱՀ-ն)

_____:
(Հայտատուի հեռախոսը, ֆաքսը, գտնվելու վայրը, էլեկտրոնային փոստի հասցեն)

Հավելված №4
Փոստային կապի ունիվերսալ
ծառայությունների մատուցման սակագների
սահմանման ու վերանայման կարգի

Ձև №1

____
(Հայտատուի անվանումը)

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՍՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կանխատեսվող ժամանակաշրջան---------------------

№	Անվանումը	Չափման միավորը	Հայտի ներկայացման ամսվան նախորդող տարվա փաստացի ցուցանիշներ	Կանխատեսվող հաշվարկային տարի	այդ թվում՝ Փոստային կապի ունիվերսալ ծառայություններ			Ոչ ունիվերսալ ծառայություններ			Ընդհանուր տնտեսական ծախսեր		
					Ուղղակի	Անուղղակի	Ընդամենը	Ուղղակի	Անուղղակի	Ընդամենը	Փոստային կապի ունիվերսալ ծառայություններ	Ոչ ունիվերսալ ծառայություններ	Ընդամենը
1.	**ԾԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ**	մլն դրամ											
1)	**Աշխատանքի վարձատրության ծախսեր**	մլն դրամ											
ա.	աշխատողների թվաքանակ	մարդ											
բ.	միջին ամսական աշխատավարձ	դրամ											
2)	**Գործուղման և ուսուցման ծախսեր**	մլն դրամ											
ա.	գործուղման ծախսեր	մլն դրամ											
բ.	կադրերի վերապատրաստման ծախսեր	մլն դրամ											
3)	**Նորոգման ծախսեր**	մլն դրամ											
4)	**Նյութական ծախսեր, այդ թվում՝**	մլն դրամ											

ա.	տրանսպորտային միջոցների պահպանման ծախսեր (տրանսպորտային նյութեր՝ վառելիք, յուղ և այլ նյութեր, ընթացիկ նորոգում ու պահպանում, պարտադիր վճարներ՝ տեխնիկական զննման վճար, բնապահպանական վճար)	մլն դրամ											
բ.	շինանյութ	մլն դրամ											
գ.	այլ նյութական ծախսեր	մլն դրամ											
5)	**Այլ շահագործման ծախսեր**	մլն դրամ											
ա.	գնովի էլեկտրաէներգիա	մլն դրամ											
բ.	մարկեթինգի և գովազդի ծախսեր	մլն դրամ											
գ.	վարձակալության ծախսեր	մլն դրամ											
դ.	պահպանության ծախսեր	մլն դրամ											
ե.	կապի և հեռահաղորդակցության ծախսեր	մլն դրամ											
զ.	համակարգչային ծրագրերի սպասարկման ծախսեր	մլն դրամ											
է.	ներկայացուցչական ծախսեր	մլն դրամ											
ը.	կոմունալ ծախսեր	մլն դրամ											
թ.	ապահովագրության ծախսեր	մլն դրամ											
ժ.	աուդիտի և խորհրդատվական ծախսեր	մլն դրամ											
ժա.	բանկային ծախսեր	մլն դրամ											
ժբ.	չփոխհատուցվող հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ	մլն դրամ											
ժգ.	արագամաշ առարկաներ (արտահագուստ)	մլն դրամ											
ժդ.	միջազգային փոստային փոխադրման ծախսեր	մլն դրամ											
ժե.	այլ ծախսեր	մլն դրամ											
2.	**Մաշվածություն (ամորտիզացիա)**	մլն դրամ											
3.	**Շահույթ**	մլն դրամ											
4.	**Անհրաժեշտ հասույթ**	մլն դրամ											

1. Սույն ձևով նախատեսված ծախսային հոդվածները Հայտատուի կողմից կարող են համալրվել նոր հոդվածներով կամ եղած հոդվածները տրոհվել բաղկացուցիչ մասերի:

(ընկերության ղեկավարի ստորագրությունը) (անուն, ազգանունը)

Կ.Տ (առկայության դեպքում)